ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 հոկտեմբերի 2022 թվականի N 417-Ա

«ՆՈՐԱՎԱՆԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՎԱՐԴԻԿ ԱՌԱՔԵԼՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 216-րդ հոդվածով, 223-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և 226-րդ հոդվածով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածով, հիմք ընդունելով Սյունիքի մարզպետի 2022 թվականի օգոստոսի 22-ի N 331-Ա որոշմամբ ստեղծված աշխատանքային խմբի հաշվետվությունը և «Նորավանի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Վ. Առաքելյանի գրավոր բացատրությունը

ո ր ո շ ու մ ե մ.

Աշխատանքային կարգապահությունը խախտելու համար «Նորավանի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Վարդիկ Առաքելյանի նկատմամբ կիրառել «խիստ նկատողություն» կարգապահական տույժը:

19.10.2022

X

ՀԱՅԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Գործարքի ID: HARUTYUNYAN HAYK 1302840382

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ **Հ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

2022թ. հոկտեմբերի 19
ք. Կապան